

այս հեռացածք պատճենուն առ հայուսի դրայ պարտ ժամանակով  
մինչ ոչ հոգել թէ ու ա ուն զրբե շրջանու ու շատը նաև  
անոն պատճենած հանու կամ մասու պատճեն պահ ու ուսուա  
ուսուա ուսուա պատճենած ցանու պահ գուած գուած առ գուած պա  
պա պա ա պատճենած պատճեն այս ա պատճեն պատճեն  
պա պա

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ԲԺԻՇԿ Ս. Շահ-Նազարեանց. Հայոց թեմական հոգե-  
տոր դպրոցների կանոնադրութեան նախագիծը. Մոս-  
կուա. 1902.

Այս անգամ Երևանի հոգեոր դպրանոցի նախկին տեսուչն  
ախպիսի մի լուրջ խնդիր է հրապարակ հանում, որ մենք մի  
կողմը թողնելով գրքին վերաբերեալ բոլոր թերութիւնները,  
քննութեան կառնենք միակն էական և սկզբունքի նշանակու-  
թիւն ունեցող խնդիրները:

Այսօր արդէն ոչ մի բանիմաց մարդ չի կարող գոհ մնալ  
մեր հոգեոր մի քանի դպրանոցներում տիրող կարգ ու կանո-  
նից. Ամեն մի հաստատութիւն պէտք է ունենալ իւր որոշ  
կանոնադրութիւնը, որպէս զի ալդ հաստատութեան մէջ գոր-  
ծող անձերից իրաքանչիւրը ճանաչէ իր իրաւունքն ու պար-  
տականութիւնները, առանց ալդ հանգամանքի ոչ մի հաս-  
տատութիւն, լինի ալդ դպրոցական թէ գիտնական, վաճա-  
ռականական թէ արդիւնաբերական և ալլն, չի կարող գոյու-  
թիւն ունենալ, արդիւնք տալ, առաջադիմել, կատարելագոր-  
ծուել. Կանոնադրութեան նոյն իսկ մի որոշ մասսի խա-  
խուս և անհաստատ լինելն աղդում է ամբողջ շէնքի վրալ և  
միւս մասերի գործունէութիւնը ևս ջլատում, անպէտք է  
դարձնում. Եթէ հաստատութեան վարիչն ու ղեկավարը չփրտէ  
իւր իրաւունքի սահմանը, նա չի կարող և իւր պատասխա-  
նատութեան սահմանը որոշել. իսկ առանց ալդ սահմանների  
որոշման՝ ղեկավարը շարունակ տատանման, անկալուն դրու-  
թեան մէջ պէտք է գտնուի. իսկ ալդ դրութեան մէջ դտնուող  
վարիչը չի կարող պէտք եղած աղդեցութիւնն ունենալ իւր  
ստորագրեալների վրալ և ցանկալի լարգանքը՝ իրենից բարձր  
իշխանութեան աշքում:

Մեր դպրոցական հաստատութիւններից կշմբաճնի ճեմարանի զեկավարն անմիջապէս պատասխանատու լինելով Վեհափառ Կաթողիկոսի առաջ, աւելի որոշ իրաւունքների տէր է հանդիսանում և կանոնադրութեան տեղը բռնում է աղջի հոգևոր պետի կամքը։ Միւս հոգևոր դպրանոցներում խնդիրը բարգւում է և չգիտես թէ կանոնադրութեան աեղնով է բռնում. արդեօք կրկին Վեհափառ Հայրապետը թէ վիճակի առաջնորդը, հոգաբարձութիւնը թէ տեսուչը։ Ընդամենը ունինք չորս հոգևոր դպրանոց և ալդ չորսից խրաքանչիւրն էլ ալսոր տարրեր վարչական ձև ունի. ալսպիսով տրեմն՝ միենուն նպատակին ձգտող, միենան հոգևոր բարձր իշխանութեան ենթակա դպրոցները չունին մի ընդհանուր կանոնադրութիւն, միատեսակ վարչական ձև և զասաւանդութեան առարկաների ծրագիր։ Մէկ զպրանոցում աւանդուող առարկան չէ աւանդուում միւս զպրանոցում. միենոյն առարկան մէկ տեղ ընդարձակ ծրագրով է զասաւանդուում, միւսում համառօտ և ալին<sup>1)</sup>։

Արդեօք ինչո՞ւ է ալսպէս. արտաքին հանգամանքներն են պատճեաը թէ անհասկացողութիւնը, մի որևէ է հիման վրաց լաւ է համարուում ալդ գրութիւնը թէ անկարելի է նկատուում բարւոփումը։ Ոչ ալս, ոչ ալս. թէ հասարակութիւնը և թէ հոգեոր բարձր իշխանութիւնը համոզուած են և ամեն տարի կրկնուող զպրոցական վէճներից պարզ տեսնում են, որ եղած զրութիւնը ոչ թէ միայն արդիւնաոր չէ, ալև վեասակար է։ Ուրեմն բնչն է պատճառը. մեր կարծիքով միմիալն անհպատութիւնն ու անվճառականութիւնը. թող վերանան ալս երկու արգելառիթ հանգամանքները և ալն ժամանակ գործն իւր կանոնաոր, բնական ընթացքով առաջ կմղուի։

Պետական օրէնսդրութեամբ մեր հոգևոր զըստը ըրոցների և ա. կշմիածնի ճեմարանի ծալրագոլն հսկողութիւնը լանձնուած է Ամենալին Հայոց կաթողիկոսին և վիճակառը առաջնորդներին. դրանք են պատասխանատու աղջի և կատավարութեան գառաջ, ուրեմն և զրանք էլ պէտք է հոգան, որ ալդ զպրանոցները կանոնաւոր ընթացք ունենան և արդիւնա-

<sup>1)</sup> Մեր բոլոր թեմական զպրոցներն ունին մի ընդհանուր ուսման ծրագիր առաւած 1886 թուին առանձին կոնդակով ի 8. հանդ. Մակար կաթողիկոսից։ Նթէ կան զարտուղարութիւններ ալդ ծրագրից, պէտք է համարել զեղծում վարիչների կողմից։ Կմր.

առ կերպով ծառակեն մեր եկեղեցու և հասարակութեան շահերին։<sup>1)</sup>

Դառնանք ամժ պ. Շահ-Նազարեանի արձարձած Խընդիրներին.

Դպրանողը պէտք է ունենալ՝

ա. Սի Տ. նախագահ վարչութեան, որ է թեմի Տ. սըրբազան առաջնորդը և կամ սրա Տ. փոխանորդը՝

բ. Մի տեսուչ և կամ սրա պաշտօնս կատար։

գ. Հոգաբարձութիւն և հոգաբարձական ժողովներ։

դ. Մանկավարժական-ուսուցչական ժողովներ։

ե. Ուսուցիչներ։

զ. Դասարանական դաստիարակներ։

է. Աւագ վերակացու և վերակացուներ։

ը. Բժիշկ։

թ. Աշակերտներ ալլն։

Առաջին ձանօթութեան մէջ անելացնում է. «Եթէ ինչ-ինչ պատճուններով հ. թ. հ. դպրանոցները և կամ սրանից որ և է մէկը չի ունենալ հոգաբարձութիւն, ալդ դէպքում հոգաբարձութեան բոլոր իրաւունքները և պարտաւորութիւններն անցնում են թեմք Կոնսիստորիալին։»

Ուրեմն դպրանոցի վարչութեան մէջ տեղ է բռնում կոնսիստորիան, որի միջամտութիւնն ինչ զէպքում էլ որ լինի, բալորովին աւելորդ ենք գտնում ոչ ցանկալի, որովհետեւ կոնսիստորիաները չեն կարող դպրոցական զործին օգուտ տալ առանց ալդ էլ նրանք բաւականին ծանրաբեռնուած են վիճակային գործերով։

Անուհետու պ. բժիշկն առանձին առանձին հատուածներով որոշում է դպրոցական զործունների իրաւունքներն ու պարտականութիւնները։

### Ա. Նախագահ

Տօ. նախագահ... պատասխանատու է ամենայն Հայոց արք, վեհ. կաթողիկոսի ու քաջարական իշխանութեան առաջդպրանոցի կառավարութեան ընթացքին (ուղղութեանը) վերաբերեալ (էջ 8).

Կարծում ենք, որ թեմակալ առաջնորդը կառավարու-

1) Խոկ երբ դացա հրամանները առ ոչինչ համարեն տեսուչն ու հոգաբարձուները, Կմբք.

թեան առաջ պատասխանատու է աչ անմիջապէս, ալլ դարձեալ վեհ. կաթողիկոսի միջնորդութեամբ, հակառակ գէպքում դարձեալ կյամատուէր մեր վերենն առաջ բերուած սկզբունքը՝ հոգեոր ծալրագոյն իշխանաւորի վերաբերմամբ.

Տ. նախագահը պէտք է միջնորդ հանդիսանալ ողպրանոցի տեսչի և ամենայն Հալոց վեհ. կաթողիկոսի մէջ, որպէս և Դպրանոցի տեսչի և հոգաբարձութեան մէջը (էջ 9). Այս կէտի երկրորդ մասը միտք չունի, տեսուչը հոգաբարձութեան անդամ է համարւում և նրանց հետ է դործում՝ միւնոյն ձակնի իրաւունքով. պ. բժիշկն ընդունում է ալս դրութիւնը. ուրեմն էլ առաջնորդն ինչ միջնորդութիւն պէտք է անէ տեսչի և հոգաբարձուների մէջ։<sup>1)</sup>

### Բ. Հոգաբարձութիւն

Պ. բժիշկը հոգաբարձուների թիւը որոշում է 7, որոնցից 5 աշխարհական և 2 քահանակ, աշխարհականներին ընտրում է ծխական պատգամաւորների ժողովը, իսկ քահանաներին քահանալից դասակարգը։

Սենք կարծում ենք, որ աւելի լաւ կլինի, եթէ խտրութիւն չդրուի աշխարհականների ու հոգեսորականների մէջ. ինչպէս որ ամեն մի պատուաւոր աշխարհական կարող է ծխականներից ընտրուել հոգաբարձութեան ընտրութեան պատգամաւոր, նոյնպէս և ամեն մի քանիմաց քահանակ, իբրև հարազատ անդամ հասարակութեան, կարող է ծխականներից ընտրուել և իբրև պատգամաւոր։ Այսուհետեւ աշխարհական ու քահանակ պատգամաւորներն ընտրում են հոգաբարձուներ՝ անխտիր թէ աշխարհականներից և թէ քահանաներից, առանց որոշ թիւ սահմանելու ամեն մի դասակարգի համար։

Ա. մեն. հա. վեհ. կաթողիկոսին վերապահուած իրաւունք բանալ դպրոնոցի հոգաբարձական ժողովներին կամ, հոգաբարձութեանն ուղղած պաշտօնական և ոչ պաշտօնական ծրանեցը» (էջ 9). Եթէ այս իրագործուէր, վիճակալին առաջնորդներն ուրիշ ոչ մի գործ չպէտք է ունենալին և ինչո՞ւ համար պէտք է ամեն մի աննշան և հազար ու մի անտեսական խնդիրներին վերաբերեալ բազմաթիւ թղթեր անպատճառ առաջնորդի ձեռքով բացուին. հերթակալ հոգաբարձուի գործն է ալք

<sup>1)</sup>) «... 8. նախագահին է միայն վերապահուած իրաւունք բանալ դպրոնոցի հոգաբարձական ժողովներին կամ, հոգաբարձութեանն ուղղած պաշտօնական և ոչ պաշտօնական ծրանեցը» (էջ 9). Եթէ այս իրագործուէր, վիճակալին առաջնորդներն ուրիշ ոչ մի գործ չպէտք է ունենալին և ինչո՞ւ համար պէտք է ամեն մի աննշան և հազար ու մի անտեսական խնդիրներին վերաբերեալ բազմաթիւ թղթեր անպատճառ առաջնորդի ձեռքով բացուին. հերթակալ հոգաբարձուի գործն է ալք»

Այս կէտն արդէն հակասութիւն կլինի կանոնադրութեան-  
գոլութեան. և ալդ «ե ը բ ե մ» մի ալնպիսի անսամբան ու անո-  
րոշ գաղափար է, որ ըստ ցանկութեան ամեն րոպէ կարող է՝ ա-  
ռաջ գալ. Սակայն ինչ կարիք կալ ալգավիսի մի ամեն կանոնա-  
դրութիւն ոչնչացնող հանգամանք մացնել կանոնների մէջ:  
Ամեն. հալ, կաթողիկոսն է հաստատում հոգաբարձութիւնը.  
Կթէ նա գտնէ, որ ընտրութիւնն անլաջող և ն զատակալար-  
մար չէ, կարող է չհաստատել և նոր ընտրութիւն նշանակել-  
իսկ եթէ հաստատութիւնից լեռով հանգամանքներն ալնպէս-  
բերեն, որ պէտք լինի հոգաբարձութիւնն արձակել, Վեհա-  
փառն իրաւունք ունի արձակել և կրկին նոր ընտրութիւններ-  
նշանակել:

Եթէ աւելի նպատակալարմար էք գտնում, որ վեհ. կաթ.  
ինքը նշանակէ, այն ժամանակ առ. հաստրակ ընտրութիւն  
պէտք չէ անել, Նրկու դրութիւնից մէկը ը պէտք է ընտրել.  
բժշկի առաջարկած ձեզ դարձեալ շփոթութեանց աղբիւր կարող:  
է լինել.

«Դպրանոցի հոգաբարձական ժողովների անդամ է՝ դպրա-  
նոցի տեսուչը ևս, և ունի դպրանոցի տնտեսականին վերա-  
բերեալ հարցերում մի ձախ. իսկ դպրանոցի ուսումնականին  
և բարոլականին վերաբերեալ հարցերուա վճռ ական (որո-  
շումն կալացնող) ձախն:

Կրկին շփոթութիւն. ենթադրենք թէ որև է. ալգավիսի.  
հարցում եօթը հոգաբարձուները և նախագահը մը կարծիքի-  
են, իսկ տեսուչը հակառակ կարծիքի. հետեւնքն ըստ պ-  
րժշկի այն պէտք է լինի, որ մէկի ձախը դիմացի ու թու-  
կէ ս ձախին պէտք է դերակաէ: \*) Ալսպիսի երեսլթ: ոչ մի  
ժողովներով գործող հաստատութեան մէջ չի կարող լինել.  
ալդ հակասութիւն է խնդիրների ձախից մեծամասնութեամբ.  
վճռուելու դրութեան և ընդունելի սկզբունք չէ:

Իսկ եթէ ասէիք՝ թէ հոգաբարձութիւնն իրաւունք չու-  
նի դպրոցի ուսումնական մասին վերաբերեալ խնդիրներով  
զբաղուելու ու ալդ իրաւունքը միմիախ տեսչին է վերապա-  
հուած, այն ժամանակ պարզ ու հառկանալի կլինէր զործը և

1) «Հոգաբարձական ժողովը կայացած է համարտում, երբ ներկայ են առաջնորդը, տեսուչը, և երկու հոգաբարձուա. ուրեմն ընդհանուր-  
թուր. (91/2) կէսից պակաս, որ նորնպէս ընդունելի չի կարող լինիւ:

ալդպիսի խնդիրները հոգաբարձական ժողովի խորհրդածութեան և քուէարկութեան առարկալ չէին դառնալ և վերոլիշեամբ նման հակաստկան երևոլթներ չէին առաջացնի:

Կանոնադրութեան միւս լողուածներից ևս երևում է, որ այ. բժիշկը հոգաբարձութիւնից վերցնում է ուսումնական մասի կառավարութիւնը, սակայն պարզ և որոշ չէ արտալատում ալդ միտքը:

Տեսուչն ընտրում է հոգաբարձութիւնից ու հաստատում վեհ. կաթողիկոսից. սակայն ալ. բժիշկը դարձեալ բարուք է համարել աւելացնել. վԱմեն. հալ. Վեհ. կաթողիկոսին վերապահում է իրաւունք՝ երբեմն իր իշխանութեամբ ընտրել ու հաստատել դպրանոցի տեսչին: Ուրեմն դարձեալ նոյն ժերբեմնը. Ո՛չ, կամ մէկը կամ միւսը: Եթէ ընտրութեան իրաւունքը բարձար էք համարում հոգաբարձութեանը տալ վեհ. կաթողիկոսը պէտք է պահպանէ այն կանոնադրութիւնը, որ ինքն է հաստատել Քանի որ վեհ. կաթողիկոսը հաստատում է տեսչին, նա իրաւունք կունենալ և հարկը ստիպած ժամանակ արձակել նրան իր պաշտօնից՝ նորի ընտրութիւնը թողնելով հոգաբարձութեան:

Սակայն. քանի որ կանոնադրութեան ուրիշ կէտերով հոգաբարձութեան իրաւունքն ու գործունէութիւնը միայն դպրոցի տնտեսական վարչութեամբ է սահմանափակում, և ուսումնական մասին չէ խառնվում, ըստ հեղինակին աւելի հետեղական կլինի, որ հոգաբարձութիւնը տեսչի ընտրութեան գործում նոյնպէս շխառնուի: Խնչ միտք ունի հոգաբարձութեան ընտրութիւնը, երբ տեսուչը պատասխանատու չէ լինելու. հոգաբարձութեան առաջ և գործում է անկախ, առանց հոգաբարձութեան հրահանգների:

Հոգաբարձութիւնն ամեն տարրուալ վերջը նախագահի միջոցով պահնձնում է բոլոր ժամանակակիցները թեմի կոնսիստորիալին՝ քննութեան համար:

Կոնսիստորիալի միջամտութիւնը դպրոցական գործում մենք աննպատակալարմար և անընդունելի ենք համարում:

#### Գ. Տեսուչ.

«Դարրանոցի տեսուչը հրաւիրումն հաստատում է միայն և եթ մի տարի ժամանակով...».

Շատ կարճ միջոց է մի տարին. մի տարուալ մէջ չի ե-

ըեալ տեսչի դործունէութեան արդիւնքը, որով պէտք է չափուի նրա պաշտօնավարութեան ոգտակարութիւնը, Տեսչի փոփոխութիւնը միշտ ազգում է դպրոցական կեանքի կանոնաւորութեան վերալ և եթէ ալդ շուտ-շուտ է կատարում, մինչեւ անզամ վնասակար ներդործութիւն է ունենում, Որչափ որ մի որ և է հիմնարկութեան հաստատուն կանոններով առաջնորդուի և մնալուն սկզբունքներով գործէ, այնուամենալինիւ ալդ հիմնարկութեան զեկավարից շատ բան է կախուած, սկզբունքի և կանոնի ալս կամ ալն կերպ գործադրութիւնը սերտ կապ ունի տեսչի անձնաւորութեան, նրա անհատական բնաւորութեան և կարծիքների հետ, Ուրեմն պարզ է, որ տեսչի կարճատես պաշտօնավարութիւնը և շուտ-շուտ փոփոխութիւլը բացի վնասից՝ ոչ մի օգուտ չեն բերի գործին, Ի՞նչ կարիք կալ ամեն տարի վերընտրել նոյն տեսչին, Գործի համար ամենից լաւն ալն կլինի, որ տեսուչն ընտրուի մեծ զգուշութեամբ, ուսուցչական ասպարիզում արդինաւոր գործունէութիւն ու եռանդ ցուց տուած, լաւ հալազէտ, փորձուած, մանկավարժական ասպարիզում որոշ դեր խաղացած անձն, այսպիսի տեսչի համար պաշտօնավարութեան ժամանակ որոշեն աւելորդ է, Ընարելի տեսուչը պէտք է մեր թեմական դպրոցներում ծառալած և դպրոցական գործին մօտիկ տեղեակ անձ լինի:

Հեղինակի որոշած մի տարի ժամանակամիջոցն ալն դէպքում միան կարող է օգտակար լինել, երբ դարձեալ շարունակուի այն անմիտ և վնասակար սովորութիւնը, որ մեր դպրոցների զեկը երբեմն լանձնուում է անփորձ, դպրոցական կեանքին ու մանկավարժութեան անծանօթ, հալ լեզուին և կրօնին անտեղեակ, ոչ մի ասպարիզում գործունէութիւն և եռանդ ցուց չտուած իրաւաբաններին, բժիշկներին, բնազէտներին և ալլն,

Դպրանոցի տեսուչն առնի իրաւունք՝ կարեոր դէպքերում անմիջապէս դիմել ամեն. հալ, վեհ. կաթողիկոսին, Ոչ. ալդ ևս հակասական է. Հոգաբարձութիւնից ընտրուած տեսուչը միմիալն հոգաբարձութեան կամ առ առաւելն նախագահի միջոցով պէտք է դիմէ վեհափառին, Եթէ վեհ. կաթողիկոսից նշանակուած լինի տեսուչը, ալդ դէպքում միանիրաւունք կունենալ ան միջաւ պէս ովմելու վեհ. կաթողիկոսին:

Դպրանոցի տեսչին վերապահում է իրաւունք՝ իր լիազօր իշխանութեամբ, անլապաղ արձակել դպրանոցից ծալրացւագարարու նիստ ու կաց վարող աշակերտներին։ (Էջ 22). Ոչ աշակերտ արձակելու իրաւունքը պատկանում է դպրոցի ուսուցչական ժողովին, Բոլոր մանկավարժական խնդիրներին վերաբերեալ դէպքերում վճիռ կաւացնող մարմինը պէտք է լինի ուսուցչական ժողովը. այդ ժողովի վճիռների իրագործումը աեսչի իրաւունքն է.

Դպրանոցի տեսուչն սիր լիազօր իշխանութեամբ ընտրում և հաստատում է դպրոցի համար ուսուցիչներ, դասարանական դաստիարակներ և ալն. լայտնելով միաժամանակ ալդ ամենի մասին դպ, վարչութեան Տ. նախագահին՝ ի դիտութիւնու:

Ուսուցիչները ընտրելը աեսչի գոլծն է, սակայն հասաւելն արդէն նրա իրաւասութիւնից բարձր պէտք է լինի. Եթէ ուսուցիչների հաստատուելն ու արձակուելը միմիայն տեսչի իրաւասութեան ենթակալ լինի, անձնական հակումներըն ու միատեւմները կարող են մեծ դեր խաղալ և դպրոցական գործի խաղաղ դարձացմանը վասել. Ուսուցիչներին իրենց պաշտօնում հաստատողը և արձակման վաերացնողը պէտք է լինի Ամենալն Հալոց Կաթողիկոսը. աեսչի աւաշադրութիւնները պէտք է նախագահի միջնորդութեամբ հասնեն վեհագործական գործութիւններ:

### Դ. Ուսուցիչներ.

Դպրանոցի ուսուցիչները «հրաւիրում և հաստատում» են միայն և եթ մի տարի ժամանակով» ու.։. ապա «վերահաստատում» են, սակայն՝ դարձեալ մի տարի ժամանակով, և ալդ պէս շարունակութիւն:

Դպրձեալ մի կէտ, որ անմիտ է և նոյն իսկ ստորացուցիչ ուսուցչի արժանապատութեան համար. Ինչ նպատակը ունի ամեն տարուալ այդ «վերահաստատութիւնը» և ինչ օգուտ: Հասկանալի կլինէր, եթէ հեղինակն առաջարկէր՝ մի կամ երկու տարով, ժամանակաւորապէս, ընդունել նոր ուսուցչական ասպարէզ մտնող և անփորձ երիտասարդին, որպէս զի ալդ ժամանակի ընթացքում կարելի լինի որոշել, թէ մրգան պիտանի է նա իրեն ուսուցիչ, տիրապետում է դասւանդելը առարկալին, ծանծթ է մանկավարժական սկզբունք-

Ներին, կանգնած է այն բարոլական բարձրութեան վրայ, որ պահանջում է ամեն մի դաստիարակից և ալլն. Ակսովիսի փորձից լեռու կամ պէտք է արձակել նրան և ալլա ուսուցչական պաշտօն չտալ ոչ մի դպրոցում, կամ թէ հաստատել իւր պաշտօնի մէջ՝ առանց ժամանակ որոշելու Երբ ուսուցիչը համապատասխանում է զպրոցական բարոր պահանջներին, ինչու պէտք նրան ամեն առարուալ վերջը վարանման, հոգսերի և հոգեկան անհանդիստ դրութեան մէջ ձղել. իսկ թէ ուսուցիչների լաճախսակի փոփոխութիւնները որքան վնասակար աղղեցութիւն են ունենում աշակերտների և դասաւանդելիք առարկաների վրայ, լալտնի է ամեն մի զպրոցական դորձին տեղեակ անհատին. Եթէ ժամանակի ընթացքում մկրտում լաւ համարուած ուսուցչի աշխատութիւնն ապարդիւն կճանաչուի և տեսչի նկատողութիւններն իդուր կանցնեն, ալդ դէպքում տեսչի պարտականութիւնն է հոգալ, որ աղղիսին հեռացնուի դպրոցից. Ուսուցչի դրութիւնն որչափ որ հաստատուն և ապահով լինի, ալնչափ և նրա դորձունէութիւնն արդիւնաւէտ կլինի և օգտակար զպրոցի համար. և ընդհակառակը՝ երբ ուսուցչի հոգեկան դրութիւնն անհանդիստ է և նիւթականն անապահով, նրա գործունէութիւնն էլ ջլատուած, եռանդը մարած և դասաւանդութիւնն էլ ապարդիւն է լինում. Սրանք փորձով ապացուցուած և միշտ կրկնուող պարզ երեղիթներ են.

### Ե. Ուսուցչական ժողով:

Դպրանոցի ժմանկավարժական ժողովի պաշտօնական գոլութիւնը ընդունւում է, երբ ներկալ են՝ դպ. տեսուչը և դէթ երկու ուսուցչի և դպ. աւագ վերակացուն».

Միթէ կարելի է ալսպիսի անորոշ դրութիւն ստեղծել. մեր զպրոցներում առ նուազն լինում են 15—25 ուսուցիչ—այս թուից ուրեմն բաւական է, որ չորս հոգի ներկալ լինին ժողովում ու նրանք կարող են վճիռներ կալացնել. արագիսի անկարգ բան ոչ մի տեղ չի լինում. Ժողով կալացնելու համար ներկալ պէտք է լինի առսակաւն ուսուցչական ժամանուր թուի կէսը, որպէս զի ժողովի վճիռներն օրինաւոր ճանաչուին».

«Եթէ զպրանոցի մանկավարժական ժողովը չէ կալանում նոյն իսկ երկրորդ հրաէրից լեռու, ալդ դէպքում ժողովին առաջադրուելիք հարցերի ար կամ ալն լուծումն անցնում է դպ. սեսչի լիազօր իշխանութեանը».

«Դպրանոցի տեսչին վերապահուած է իրաւունք՝ երբեմն շենթարկել դպ. մանկ. ժողովին առաջարկուած հարցը վերջնական քուէարկութեան, այլ բաւականանալ միայն արդէն բալտնուած թեր և դէմ կարծիքներով։»

Վերջին երկու կէտերով հեղինակը բոլորովին վալր է ձգում մանկավարժ ական ժողովի հեղինակութիւնն ու վարկը, որ կորստարեր հետեանքներ կարող է ունենալ զըպուցական գործի համար։ Մանկավարժական և աշակերտներին վերաբերեալ խնդիրներում՝ մանկավարժական ժողովն ամենից բարձր հաստատութիւնը պէտք է լինի. մանկավարժական ժողովների վճիռներն ալդ խնդիրներում պարտաւորեցուցի պէտք է լինին ամենքի և նոյն իսկ տեսչի համար։ Ուսուցիչներն իրեւ անհատ ստորադրուում են տեսչին, սական ուսուցչական ժողովը ստորադրեալ մարմին չպէտք է լինի. ընդհակառակը տեսուչը պէտք է հանդիսանալ իրեւ գործադիր մարմին ուսուցչական ժողովների վճիռների։ Տեսուչը մասնակցում է մանկավարժական ժողովների վրայ, ուր մնաց թէ միան կարծիքներ լսէ և իր խելքի կտրածն անէ։ Որչափ որ տեսուչն իւր գործին հմուտ և գիտուն մարդ լինի, աշնուամենալինիւ իբր անհատ հաւանօրէն նա աւելի շուտ ենթակալ կլինի սխալանքի կամ կողմնակի ազդեցութեան, քան թէ մի ամբողջ ժողով, որի անդամներից շատերն ես բազմամենալ պաշտօնավարութեամբ ու փորձով տեսչից պակաս հմտութիւն չեն ունենալ։

Մանկավարժական ժողովներում արժարծուած խնդիրները բնականաբար աւելի բազմակողմանի քննութեան են առնուում, մանրամասնաբար մշակուում և օգտակար կամ ապարագիւն ճանաչուում, քան թէ նոյն խնդիրները կարող էին լուծուել միմիալին տեսչի հակեցքով ու ցանկութեամբ։ Մէկ խօսքով՝ դպ. տեսուչը պէտք է զեկավարուի մանկավարժական ժողովի հակացքով։

«Դպրանոցի աշակերտների ընդունելութիւնը և արձակումը լիովին վերապահուած է դպ. տեսչին։ Հդու. տեսչին վերապահուած է իրաւունք տալ դպ. Զ. ըդ դասարանի աշա-

կերտներին աւարտման վկալական՝ առանց հարցաքննութեան և մեան ևս:

Մեր վերոիշեալ բացատրութեան հիման վերաբ՝ ալս երկու կտու կէտերն ևս տեսչի իրաւասութեան սահմանից դուրս են և մանկավարժական ժողովի զբաղմանց շրջանն են մտնում:

Բաւականանում ենք ալս չափով և գովում պ. Շահ-Նազարեանցի եռանդը, որ այսպիսի մի մանրակրկիտ աշխատութեամբ առիթ է տալիս հոգեոր բարձր իշխանութեան և հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել դպրոցական կանոնադրութեան պէս մի լուրջ և անհրաժեշտ խնդրի վրա:

ԲԲԲԶ

---

Հառապտման. կազմեց Ե. Թ. հրատ. Ցովհաննէս Արամեանցի. Ս.-Պետերբուրգ 1902

Հատ սիրուն ձեռնարկութիւն է սկսել Ե. Թոփչյեանը. նա կազմում է «բաւանի մարդկանց կենացքութիւնները» և ինչպէս երեսում է գրքուկիս վերնազրի ճակատից, ալս արդէն հինգերորդ կենացքութիւնն է. Տաղանդաւոր մարդկանց կեանքն ուսանելի կողմեր շատ ունի, ալդ պատճառով և մեր ժողովրդի և նա մանաւանդ պատանեկութեան համար օգտու կար ընթերցանութեան նիւթ կարող է լինել թէ ժամանակակից գործող և թէ պատմական նշանաւոր մարդկանց կեանքն ու գործունէութիւնը՝ միաւն թէ ընտրութիւնը լինի խիստ և կենացքութիւնը հմտութեամբ ու ճաշակով կս զմուած:

Մեր ձեռքքը չեն անցել Ե. Թ.-ի կազմած նախորդ չորս կենացքութիւնները, ալդ պատճառով և մեր խօսքը կվերաբերի միմիալն «Հառապտման ին»:

Հառապտմանն ալժմնան զերմանացի դրողների մէջ նշանաւոր դիրք ունի բռնած և իւր տաղանդաւոր երկերով արժանացել է ոչ միայն զերմանացիների, ալլ և ամբողջ Եւրոպ պալի ուշադրութեանը: Նրա քանքարաւոր բեմական զրուածները հետզետէ թարգմանում են օտար լեզուներով և ներկալացւում Եւրոպական լալտնի թատրոններում: Նա դեռ քառասուն տարին չէ բոլորել, ուստի և կարող է աւելի կատարելագործուած աշխատաւոթիւններով հանգէս գալ ասպագալում և աւելի հոչակուել: